

ԿՕՆՏԻ ՍՕՑԻՕԼՕԳԵԱՆ:

Կօնտի աւելի կարևոր գործն այն է, որ նա հիմք դրեց մի նոր նշանաւոր գիտութեան, որը նա ինքն կնքեց սօցիօլօգեա անունով: Տեսնենք թէ ինչ տեղ ու ինչ նշանակութիւն է տալիս նա նոր գիտութեան արդէն գոյութիւն ունեցող գիտութիւնների շարքում:

Գիտութիւն ասելով Կօնտը հասկանում է դրական երևոյթների ուսումնասիրութիւնը: Գոյութիւն ունեն բազմաթիւ ու բազմատեսակ երևոյթներ, բայց սրտնք կարող են բաժանուել զանազան դասակարգերի նախելով իրանց պարզութեան կամ բարդութեան: Արքան մի երևոյթ բարդ է, նոյնքան բարդ է և նրա ուսումնասիրութիւնը: Այսինքն պարզ, հասարակ երևոյթների դասակարգին համապատասխանում են պարզ, տարրական գիտութիւնները: Իսկ բարդ երևոյթներին համապատասխանում են զժուարին, բարդ գիտութիւնները: Աւ բոլոր գիտութիւնները Կօնտը դասաւորում է նախելով նրանց բարդութեան աստիճանին:

Կօնտի կարծիքով գիտութիւնները նախ կարող են բաժանուել երկու խմբի՝ տեսական կամ իսկական գիտութիւններ ու գործնական գիտութիւններ կամ արուեստներ: Մի կողմ թողնելով գործնական գիտութիւնները, Կօնտը զուտ գիտութիւններն էլ բաժանում է երկու խմբի: Առաջին խումբը կազմում են այն գիտութիւնները, որոնք ուսումնասիրում են երևոյթների օրէնքները, նրանց էական լատիութիւնը՝ երբ, օրինակ տարրալուծութիւնը (քիմիան): Իսկ երկրորդ խումբը կազմում են լոկ նկարագրական գիտութիւնները, օրինակ բուսաբանութիւնը կամ հանքաբանութիւնը: Վերջինը միայն նկարագրում է հանքերը, նիւթերը, ինչպէս որ սրբանք գոյութիւն ունին: Իսկ տարրալուծութիւնը, որը նոյնպէս գործ ունի հանքերի, նիւթերի հետ, ոչ թէ նկարագրում է նրանց, այլ փորձեր և գիտողութիւններ անելով, ընդհանուր օրէնքներ է հանում: Նկարագրական գիտութիւններն էլ մի կողմը թողնելով, Կօնտը դրադում է բուն տեսական (արստրակտ) գիտութիւնների դասաւորութեամբ:

Վերջիններս հետազօտում են կամ մեռած անդապարան մար-

միւնները (ու երևութները) կամ զգայարանական մարմինները (անասունը, մարդը, հասարակութիւնը), ուստի և կոչուում են անզգայարանական և զգայարանական գիտութիւններ: Առաջինների առարկան կամ երկինքն է (աստղաբաշխութիւն), կամ երկիրը (Ֆիզիկա)՝ Ֆիզիկան իւր կողմից բաժանուում է երկուսի՝ բուն Ֆիզիկա ու տարրալուծութիւն: Զգայարանական գիտութիւնների առարկան անհատըն է (բիօլոգիա) կամ հասարակութիւնը (սոցիօլոգիա): Այսպիսով ստանում ենք հինգ գիտութիւններ, որոնց բոլորի առաջից Կօնտը աւելացնում է և մատիմատիկան, որը ամենատարրական գիտութիւն է համարում, ու կաղմում հետևեալ շարքը 1) մատիմատիկա, 2) աստղաբաշխութիւն, 3) Ֆիզիկա, 4) քիմիա, 5) մարդաբանութիւն (բիօլոգիա) ու 6) սոցիօլոգիա:

Այդ դասաւորութեան (շարքին) Կօնտը տալիս է առանձին նշանակութիւն: Որքան մի գետութիւն առաջ է դրւած շարքի մէջ, այնքան նա ընդհանուր է, և միևնույն ժամանակ հասարակ, իսկ որքան մի գիտութիւն լետոյ է դրուած, այնքան նա մասնաւոր է և միևնույն ժամանակ բարդ (դժուարին): Սրինակ՝ մատիմատիկան գործ ունի թւերի հետ, որոնք կարող են վերաբերել բնութեան բոլոր երևութներին, ուրեմն նա ընդհանուր է: Իսկ սոցիօլոգիան գործ ունի հասարակութեան հետ, որը տիեզերքի մէջ մի մասնաւոր երևութ է: Միևնույն ժամանակ մատիմատիկան հեշտ է, սլարդ ու որոշ գիտութիւն է, մինչդեռ սոցիօլոգիան ամենաբարդ գիտութիւնն է. նրա երևութների հետազօտութիւնը շատ աւելի դժուար է, քան մատիմատիկական խընդիրներին լուծումը, որոնց երեխաներն անգամ ընտելանում են: Բասաւորութեան այդպիսի չատկութիւնից բղխում է այն հանգամանքը, որ իւրաքանչիւր գիտութիւն հիմնուած է նախորդի վրայ. օրինակ աստղաբաշխական երևութները ուսումնասիրելու համար անհրաժեշտ է նախ մատիմատիկան ըմբռնել: Իսկ սոցիալական երևութները հետազօտելու համար, հարկաւոր է նախ անցած լինել գիտութիւնների ամբողջ շարքը:

Բայց Կօնտի կարծիքով իւր դասաւորութիւնը ունի և մի ուրիշ կարևոր նշանակութիւն: Բոլոր գիտութիւնները, ըստ Կօնտի, իրանց գալանալու սկզբից, անցնում են երեք մտաշրջանները, այսինքն նախ ենթարկուած են լինում աստուծարանական, ապա բնագանցական մտածողութեան եղանակներին և վերջի վերջոյ մտնում են դրական շրջանի մէջ: Կօնտի դասաւորութեան մէջ տեղ ունեցող իւրաքանչիւր գիտութիւն այնքան աւելի շուտ է հասնում դրական շրջանին, որքան նա առաջաւոր տեղ է բռնում շարքի մէջ: Ուստի մատիմատիկան դեռ շատ հին ժամանակներից սկսած ուսումնասիր-

ուել է դրական եղանակներով, իսկ սօցիոլոգեան միայն մեր դարումն է ազատում աստուածաբանական և բնազանցական կապանքներից և դրական գիտութիւնների շարքը անցնում իւր ժամանակում:

Ուրեմն հասարակական երևութների գիտական ուսումնասիրութեան ուշանալը Աօնտը բացատրում է նրանց բարդութեամբ և ուրիշ կարգի երևութներից կախուած լինելով: Ահա—ասում է Աօնտը—այն մեծ և միակ պակասը, որը պէտք է լրացնել՝ դրական վիճակի արտաբերութիւնը կատարեալ անելու համար: Ներկայ ժամանակում, երբ մարդկային միտքը արդէն ստեղծել է անզգայարանական և զգայարանական երևութների ֆիզիկան, մնում է նրան՝ լրացնել գիտողական գիտութիւնները, ուսումնասիրելով հասարակական ֆիզիկան կամ սօցիոլոգեան:

Անցնելով բուն սօցիոլոգիային, Աօնտը նախ քննադատում է այն ուղղութիւնը, որ տիրապետում էր սօցիալական (հասարակական և քաղաքական) ինքիւնների մէջ:

Քաղաքակրթութեան պատմութիւնից երևում է, որ ոչ մի կարգապահութիւն կեանքի մէջ չէ կարող կանգուն մնալ, եթէ նա հակառակ է չառաջադիմութեան և միւս կողմից, ոչ մի չառաջադիմութիւն չէ կարող կատարուել առանց որոշ կարգապահութեան:

Սակայն մեր ժամանակում մարդիկ դեռ չեն ըմբռնում այդ ճշմարտութիւնը: Պահպանողական բանակը ուրիշ բան չէ ուղում հասկանալ, բայց եթէ՝ պահպանել գոյութիւն ունեցող դրութիւնը (տիրապետող կարգը), իսկ չառաջընթաց բանակը չէ ուղում լսել որևէ կարգի մասին, այլ աշխատում է ամեն ինչ քարուքանդ անել: Այդպիսի լիակ շրջանի մէջ պտտւո է գալիս ժամանակակից հասարակութիւնը: Իւրաքանչիւր նոր վէրքի դէմ, որ ցոյց է տալիս ժամանակակից կեանքը, պահպանողական կուսակցութիւնը առաջարկում է որպէս դարման՝ վերականգնել հին կաղմակերպութեան համապատասխան մասը: Իսկ քննադատական դպրոցը շարիքը վերադրում է այն հանգամանքին, որ հին կաղմակերպութիւնը դեռ ամբողջովին խորտակուած չէ, ու խորհուրդ է տալիս՝ աւելի վճռականօրէն քանդել իւրաքանչիւր կարգաւորիչ ուժ: Պահպանողական ուղղութիւնը, Աօնտի կարծիքով, բղխում է աստուածաբանական մտածողութիւնից, իսկ բացասական-քննադատական ուղղութիւնը բնազանցական մտածողութեան արդիւնք է համարում:

Հասարակական կեանքը այդպիսի անլարմար դրութիւնից հանելու համար հարկաւոր է հնարել այնպիսի կենսաձև, որը անընդհատ

զարգանալով հանդերձ, չը հակասէ իր հիմնական սկզբունքներին, մինչդեռ չիշեալ երկու աշխարհայեցողութիւնները (կուսակցութիւնները) չեն կարող համապատասխանել այդ պահանջին:

Պահպանողական դպրոցը շարունակ զիջումներ անելու տրամադրութիւն ունի իւր սկզբունքներին տեսութեան մէջ, որ ցոյց է տալիս այդ ուսման փուլ լինելը: Հին աշխարհայեցողութիւնը այն աստիճանի խորտակուած է, որ նրա ամենաջերմ կողմնակիցները անգիտակցաբար, զարի ազդեցութեան ենթարկուելով, փոխուել են ու այլ ևս չաւ չեն հասկանում իրանց դպրոցի էութիւնը: Սրանք մոռանում են, որ գիտութեան, արուեստի ու տնտեսութեան զարգացումն է աստուածաբանական — զինուորական ուղղութեան անկման գլխաւոր պատճառը: Այնուամենայնիւ ոչ մի կառավարութիւն և ոչ մի դպրոց այնքան պահպանողական չէ, որ սկսէ անպայման կերպով հալածել գիտութիւնները, արուեստը ու արգիւնագործութիւնը: Ընդհակառակը, բոլոր կառավարութիւնները իրանց պարտքն են համարում նպաստել չառաջադիմութեան: Ինքը Բօնապարտը, որ շատ վճռական կերպով կողմնակից էր պահպանողական քաղաքականութեան, այնուամենայնիւ ձգտում էր ստանալ արգիւնագործութեան, արուեստի և գիտութեան պաշտպանի փառքը: Մինչև իսկ պահպանողական դպրոցի մտածող ներկայացուցիչները չեն կարողանում չը հակասել իրանց: Օրինակ Դէ-Մէստրը աշխատում է ասպացուցել պապի դերի շխառնութիւնը պատմական ու քաղաքական հիմունքներով, առանց որ պահանջէ այդ՝ ուղղակի աստուածային իրաւունքի հիման վրայ:

Ո՛չ պակաս հակասութիւններ ունի և բնազանցական դպրոցը:

Նա ընդունում է օրինակ, որ բարոյական կանօնները և նոյն իսկ վարչական հիմնարկութիւնները բղխում են «բնական իրաւունքի» գաղափարից, մինչդեռ այդ «բնական իրաւունքը» մի նախապաշարմունք է: «Բնական իրաւունք» ասած բանը իսկապէս գոյութիւն չունի, այլ բոլոր օրէնքները լոկ մարդու լօրինած միջոցներ են՝ ընդհանուր բարօրութեան հասնելու համար: Յիշեալ նախապաշարմունքը մանաւանդ տարածուած է այն երկրներում, որտեղ հրատարակախօսները հիմնւում են հռոմէական իրաւունքի վրայ: Աւրօպական իրաւագէտները հետեւելով հռոմէական օրէնագէտներին, որոնք իրանց կողմից նմանուել են լուծական բնազանցագէտներին, ընդունում են, թէ ամեն մի արդարացիութեան և անարդարութեան փորձաքարը «բնութիւնն» է. իսկ բնութիւն ասելով նրանք երևակայում են ինչոր էութիւն, որը տարբերում է «նախախնամութիւնից» իւր անկենդան լինելով: Քրիստոնէական Աւրօպայի գրողները, որոնք բարոյական գաղափարները համակարգեցին, հի-

մնում էին իրանց դատողութիւնները նոյն բնազանցական նախապաշարմունքների վրայ: Մտածողութեան այդ ձևը իւր դադաթնակէտին հասաւ Բուսսօլի աշխարհայեցողութեան մէջ:

Բուսսօլի դպրոցը, որ բացասական ուղղութեան ամենազօրեղ ներկայացուցիչը ու լեղափոխութեան դրող և ղեկավարող ուժն էր, իւր ամբողջութեամբ մի կատարեալ հակասութիւն է չառաջընթաց ուղղութեան համար: Նա քարոզում էր, թէ քաղաքակրթութիւնը փչացրել, անբաղդացրել է կեանքը, ուստի պէտք է վերադառնալ նախկին, սկզբնական դրութեան: Չէ՞ որ այդ նշանակում է արդելաութիւն հանդիսանալ իւրաքանչիւր չառաջադիմութեան:

Այդպէս ուրեմն ոչ աստուածաբանական ու ոչ էլ բնազանցական դպրոցները չեն կարող առաջարկել հասարակութեան մի բարար կազմակերպութիւն: Կօնտի ասելով միայն դրական ուսումնասիրութեան վրայ հիմնուած կազմակերպութիւնը կարող է կանոնաւորել հասարակական կեանքը, որոնելով ու գտնելով այնպիսի կենսաձև, որը կարողանար ապահովել թէ կարգաւորութիւնը և թէ չառաջադիմութիւնը: Հասարակական կեանքը մի օրգանիզմ է, որ պիտին, օրինակ, մարդու մարմինն է, ուստի այդ օրգանիզմն էլ պէտք է ուսումնասիրել այնպէս, որպէս դիտութիւնը ուսումնասիրում է մարդու կազմուածքը: Ուրեմն սօցիօլոգեան նոյնն է հասարակական օրգանիզմի համար, ինչ որ ֆիզիօլոգեան կենդանական մարմնի համար: Որպէս ֆիզիօլոգեալի մէջ զանազանում են մարմնի կազմը նրա կեանքից, նոյնպէս էլ պէտք է որոշել հասարակութեան կազմակերպութիւնը (կարգը) նրա պատմութիւնից (չառաջընթացութիւնից): Որպէս մարմնի մէջ առանց որոշ կազմութեան չէ կարող կեանք գոյութիւն ունենալ, նոյնպէս էլ հասարակութեան մէջ առանց կարգ ու կանոնի չէ կարող չառաջադիմութիւն լինել:

Այդ երկու կարգի երևոյթները անքակտելի կերպով կապուած են իրար հետ: Ինչպէս բոյսի կամ կենդանու կեանքը խորտակում է նրա կազմութեան քաղքայուելով, նոյնպէս էլ մարդկային ցեղի չառաջադիմութիւնն անսպասձառ կը կորչի, եթէ կարգապահութիւնը վերանայ:

Իրաւի, ինչի մէջն է կախնում մարդկութեան առաջ գնալու կարևոր խնդիրը, եթէ ոչ կարգի ու չառաջընթացութեան մէջ: Ի՞նչն է դանդաղեցնում մարդկութեան առաջ գնալը, եթէ ոչ չափազանց չարքանքը դէպի գոյութիւն ունեցող կարգապահութիւնը: Բոլոր դարեշրջաններում և իւրաքանչիւր աղղի մէջ միշտ լինում են չառաջադիմական և կարգապահական կուսակցութիւններ:

Այդ կուսակցութիւնները միմեանց զանազան վիրաւորական անուաններ են տալիս: Սակայն ընդհանուր առմամբ մարդկութիւնը բարի նպատակներով է սողորուած: Տարբերութիւնը նրա մէջն է, որ մինչդեռ մէկ կուսակցութիւնը մեծ նշանակութիւն է տալիս արմատացած կարգաւորութեան բարիքներին և վախով ու սարսափով է նայում այդ կարգաւորութիւնը խանգարելու իւրաքանչիւր փորձի վերայ, միւս կուսակցութիւնը, տեսնելով վերջինի պակասութիւնները, ձգտում է քանդել ամեն մի կարգաւորութիւն:

Չունենալով սլարդ դադափար կարգաւորութեան և չառաջադիմութեան իսկական չարաբերութեան մասին, սովորաբար երկու կուսակցութիւններն էլ ծայրաչեղութեանց են հասնում: Կարգաւորութեան կուսակցութիւնը, սիրելով կարգ ու կանոն, սկսում է արհամարել չառաջադիմութիւնը և համարել նրան կարգաւորութեան թշնամի: Իսկ չառաջադիմական կուսակցութիւնը ձգտելով դէպի չառաջադիմութիւն, սկսում է արհամարհել կարգաւորութիւնը և համարել նրան զօրեղ արգելառիթ չառաջադիմութեան դէմ: Այդ միակողմանի հաշկացքների ամենալաւ օրինակները կարելի է գտնել մի կողմից Չինաստանի քաղաքակրթութեան պատմութեան և միւս կողմից Ֆրանսիական լեղափոխական տարրերի մէջ: Չինաստանում համարեա չառաջադիմութեան բոլոր նշանները անհետացան դէպի կարգաւորութիւնը եղած մանրակրկիտ չարքանքի պատճառով: Իսկ Ֆրանսիական լեղափոխականները բացարձակ թշնամութիւն չաչտնեցին իւրաքանչիւր կարգաւորութեան և իզուր փորձեցին չառաջադիմութիւնը իրականացնել զուտ բացասական գործողութեամբ ամենաչն կարգ քարուքանդ անելով: Բայց իսկապէս համաշխարհային պատմութիւնը կաշանում է կարգի և չառաջադիմութեան տարրերի փոխադարձ կառուի մէջ: Այստեղ նշմարում է առաջինների չամառութիւնը, որը վերջի վերջոյ կտրուում է ու չաղթում վերջինների անդուստ ուժի առջև. իսկ չաղթողները չառաջ տարուելով չաղթական ալիքներից, հասնում են մեծամեծ ծայրաչեղութեանց, որի հետեանքն է լինում մի նոր բէակցեա և այդպէս շարունակ...: Ա՛րքան կը բարեփոխուէր այդ բոլորը, եթէ կարելի լինէր հասկացնել մարդկութեան, որ կարգաւորութեան ճշմարիտ նպատակը չառաջադիմութիւնը պիտի լինի, իսկ չառաջադիմութեան ճշմարիտ նպատակն է կարգաւորութիւնն է:

Հասարակական կարգի ուսումնասիրութիւնը Աօնտը, մեքենաքանութեան բաժիններին նմանեցնելով, անուանում է սօցիալական ստատիկա, իսկ չառաջընթացութիւնը՝ սօցիալական դինամիկա և

երկու երևույթներն ուսումնասիրում է առանձին-առանձին, ըստ որում գլխաւոր ուշադրութիւնը դարձնում է սօցիալական զինամիկայի վրայ, համարելով նրան սօցիոլոգիայի գլխաւոր մասը:

Ս Տ Ա Տ Ի Կ Ա:

Ստատիկայի մէջ կօնտր դրադուում է այն մի քանի երևույթներով, առանց որոնց սօցիալական զինամիկան անհասկանալի կը լինի: Նա քննում է այն պայմանները, որոնք անհրաժեշտ են, որպէս զի հասարակական կեանքը կարողանայ գոյութիւն ունենալ:

Անհատը, այսինքն իւրաքանչիւր մարդ, հակում ունի դէպի հասարակական կեանքը: Սխալ է այն կարծիքը, իբր թէ մարդկային բնաւորութեան մէջ գլխաւոր տեղը միտքն է բռնում, և իբր թէ հասարակական կեանքը առաջ է գալիս նրանից, որ իւրաքանչիւրը որոշ օգուտ է սպասում հասարակական կեանքից իր պահանջներէ համար: Մարդիկ հասարակութիւն են կազմում, առաջ քան ընդհանուր օգտի մասին գաղափար ունենալը:

Հասարակութիւնը, որպէս անհատներէ կազմակերպութիւն միշտ իր վրայ կրում է մարդու անհատական բնաւորութեան կնիքը: Ուրիշ խօսքով ասած՝ հասարակութեան այս ու այն չատկութիւնը բացատրւում է անհատի չատկութիւններով: Ուստի մի առ մի կը թւենք այստեղ առհասարակ մարդու (անհատի) էական չատկութիւնները:

1. Մարդ ի բնէ ծուլ է, չէ սիրում անընդհատ գործել, աշխատել: Նա փոփոխութիւններ է սիրում, մինչդեռ ամենայն մի գործունէութեան չաջողութեան անհրաժեշտ պայմանը անընդհատութիւնն է: Դէպի մտաւոր աշխատութիւնը մարդիկ քիչ հակում ունին, ուստի շատերը ամենափոքրիկ մտաւոր աշխատութիւնից չոգնում են, մինչդեռ այդ դրադմունքը անհրաժեշտ է մարդուն: Ուստի մարդու մէջ մտաւոր գործունէութիւն առաջացնելու համար, հարկաւոր են կողմնակի պայմաններ, զրդիչ հանդամանքներ, որոնք մեծ մասամբ թէև բարձր չեն, բայց զօրեղ են: Որքան բարձր են այդ զրդիչ պայմանները, այնքան վեհ է մարդու էութիւնը: Նթէ մարդու կրքերը աւելի թուլ լինէին, անշուշտ հասարակաց կեանքը աւելի բաւարար կը լինէր: Բայց եթէ մարդիկ կիրքեր չունենային ու զեկալարուէին միայն մտքի աղղեցութեամբ, ապա հասարակական կազմութիւնը առհասարակ գոյութիւն չէր ունենալ: Զգացումները, կրքերը ոչ միայն հարկաւոր են միտքը թմրած դրութիւնից հանելու